հողազուրկ են. նրանք մշակում են աղաների հողերը և բերքի $^1/_3$ մասը տալիս են նրանց, իսկ 10 թուման էլ պետական հարկ են վճարում։ Բացի այդ աղաներն իւրաքանչիւր տարի վերցնում են նաև ապօրինի հարկեր՝ այսպէս 50 բեռ ցորեն, 40 հաւ, 2000 հաւկիթ, 40 էշ և 30 գործող մարդիկ։*

Այս ծանր հարկերի վրայ աւելացնենք անվերջ հարստահարութիւններն ու կեղեքումները, որ կատարւում են հէնց կալւածատէր աղաների մարդկանց կողմից, որոնց հետ միաժամանակ կեղեքում են նաև թափառաշրջիկ ցեղերը, որոնց թիւն այս շրջանում մեծ է։ Շնորհիւ այս հանգամանքների գիւղն աղքատացել է, այնպէս որ, հայ գիւղացիութիւնն այստեղ գտնւում է տնտեսական չափազանց նեղ դրութեան մէջ։

Գիւղի հողը մեծ մասամբ ջրովի է. օգտւում են աղբիւրներից և Զայենդէրուդ գետից, որը ձգւած է գիւղի արևելեան կողմը, 20 քայլ հեռաւորութեան վրայ և Արթունաքադը բաժանում է Բարդաշալից. դա սկիզբ է առնում Զէհէլ-Զէշմից և ոլորապտոյտ հոսելով Արթունաքադի ու Բարդաշալի արտերի փէշերից արագընթաց անցնում է դէպի Նոր—Զուղա։

Գիւղն ունի մի փոքրիկ, աննշան եկեղեցի՝ Ս. Մինաս։ Դպրոց չունի։ Ժողովրդին հարկաւոր է կրթութիւն։

№	ԿԱՐԳԵՐ	Շունչ
1	Աղքատ	20
2	Զունոր	7
3	Միջակ	36
4	Ունեւոր	—
5	Հարուստ	—
	Ընդամենը	63

ՂԱԼԱՄԵԼԻՔ

Սա գտնւում է Սվարան գիւղի արևմտեան կողմը, կէս

* Այս տեղեկութիւնները բերում ենք գիւղի քէդխուդայի տուած վկայութիւնից։